

**<<ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱԹՈԼՈԳՈԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ>> ՓԲԸ-Ն
ԵՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

05.11.2019-05.11.2022թ.թ.

Տեղեկատվություն

<<Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>> փակ բաժնետիրական ընկերությունը համաձայն կանոնադրությանը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է հարյուր տոկոս պետության սեփականության իրավունքով: Վերջինս իր գործունեությունը իրականացնում է ք. Գյումրի Չայկովսկու թիվ 6 հասցեում՝ 0,47/հա/ մակերեսով հողամասի վրա գտնվող մեկ հարկանի քարե շենքում, զբաղեցնելով 485,66ք/մ մակերես, որի կառուցվածքում հիմնականում ներառված է վարչական կազմի, բժիշկների, միջին և կրտսեր բուժ անձնակազմի աշխատանքային և հանգստի սենյակներ, սանհանգույցներ, թվով 2 դիահերձարան, որից մեկն է նպատակային օգտագործվում: <<Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>> փակ բաժնետիրական ընկերությանը 12.08.2003թ-ին ՀՀ ԱՆ կողմից տրվել է անժամկետ թույլտվություն. (լիցենզիա՝ Կ-XX-000201), բժշկական օգնության և սպասարկման տեսակը՝ ախտաբանաանատոմիական, լաբորատոր ախտորոշիչ (բջջաբանական, հյուսվածքաբանական): Բժշկական օգնության և սպասարկման ձևը՝ արտահիվանդանոցային: Ներկայումս չի իրականացվում միայն բջջաբանական հետազոտությունը: <<Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>> ՓԲԸ-ում գործունեություն են իրականացնում նաև ՀՀ ԱՆ ԴԲԳԳԿ-ի Շիրակի մարզի բաժնի ղատաբժշկական փորձագետները:

Վերոգրյալից ելնելով և հաշվի առնելով բժշկական օգնության և սպասարկման ախտաբանաանատոմիական գործունեության տեսակի՝ առանձնահատուկ առաքելությունը երկրի կառուցվածքում, մասնավորապես՝ ազգաբնակչության շրջանում հիվանդությունների, ախտաբանական վիճակների ճշգրիտ և վաղաժամ ախտորոշման, ինչպես նաև մահվան պատճառ հանդիսացած հիվանդությունների և ախտաբանական վիճակների վիճակագրական տվյալների արձանագրման մասով, որն էլ նպաստելու է հիվանդությունների բուժման տակտիկայի ճիշտ ընտրությանը, վերահսկմանը և կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկմանը. <<Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>> փակ բաժնետիրական ընկերության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման համար անհրաժեշտ է՝

1. <<Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>> ՓԲԸ-ում աշխատանքային պայմանների բարելավման համար ձեռք բերել առնվազն երեք նոր համակարգիչներ:
2. <<Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>> փակ բաժնետիրական ընկերության ներկայիս շինության հարակից տարածքում նոր շինության կառուցում. ախտաբանաանատոմիական հետազոտությունների արդյունքում առաջացած թաց ու չոր արխիվի պահպանման և սզո պարագաների վաճառք իրականացնելու

նպատակով (ընկերության կողմից կամ վարձակալական հիմունքներով տրամադրում՝ Ա/Ձ-ի): Վերջինիս անհրաժեշտությունը և առավելությունն այն է, որ ապահովվելու է լրացուցիչ ֆինանսական ներհոսք ընկերության բյուջե, ինչպես նաև հարմարավետ և օպերատիվ է դարձնելու դիակի ախտաբանաանատոմիական կամ դատաբժշկական փորձաքննություններից հետո հանգուցյալի հարազատներին նախապատրաստվել հուղարկավորմանը, գերծ մնալով մարդկանց կուտակումներից ընկերության տարածքում:

3. Առկա շինությունը նպատակային օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու նպատակով, ըստ առաջնահերթության՝ երկրորդ դիահերձարանը զինել 2-3 դիասեղաններով, բժշկական գործիքներով և այլ անհրաժեշտ պարագաներով: Վերջինիս անհրաժեշտությունը և առավելությունը այն է, որ արտակարգ իրավիճակների դեպքում (այդ թվում՝ բնական աղետներ, դժբախտ պատահարներ, շրջապատի համար վտանգ ներկայացնող սուր վարակիչ հիվանդություններ), հնարավոր կլինի իրականացնել դիակների ախտաբանաանատոմիական կամ դատաբժշկական պատշաճ փորձաքննություն:

4. <<Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>> ՓԲԸ-ում հյուսվածքաբան և բջջաբան մասնագետներով, նոր լաբորատոր սարքավորումներով, գործիքներով և այլ պարագաներով համալրում: Վերջիններիս անհրաժեշտությունը և առավելությունը այն է, որ հնարավոր կլինի ընկերությունում՝ անհամեմատ ներկայիս հետ ընդլայնել ախտաբանաանատոմիական հետազոտությունների շրջանակը, իրականացնել հետազոտվող կենսաբանական նյութի /ւնուշի/ ճշգրիտ և պատշաճ ախտորոշումը, ինչն էլ ավելացնելու է ֆինանսների ներհոսքը ընկերության բյուջե, ի հաշիվ պետական պատվերի, բժշկական հաստատությունների հետ կնքվող պայմանագրերի, մարդկանց անմիջական դիմելիության և վճարման:

5. Ճիշտ կադրային քաղաքականության իրականացում. <<Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>> ՓԲԸ-ում կոմպետենտ, բարձր որակավորմամբ, մասնավորապես նեղ մասնագետներով համալրում: Միաժամանակ վերջիններիս խրախուսել, աջակցել անհրաժեշտ վերապատրաստումներ անցնելու և իրականացվող կոնֆերանսներին մասնակցելու նպատակով:

6. Ներկայանալ առաջարկներով և քննարկել լիազոր մարմինների հետ <<Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>> ՓԲԸ-ն հարավային կամ հարավարևելյան մասնաճյուղ ստեղծելու նպատակով: Վերջինիս անհրաժեշտությունը և առավելությունը այն է, որ կառուցողական դարձնել ախտաբանաանատոմիական ծառայությունը Շիրակի մարզում, ինչպես նաև հեռավորությունով պայմանավորված հարմարավետ դարձնել տվյալ տարածաշրջանի բնակիչների համար:


7. Դիակը մահվան վայրից դիահերձարան տեղափոխման համար ձեռք բերել առնվազն երկու՝ հարմարեցված ավտոմեքենաներ:

8. <<Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>> ՓԲԸ-ն սեփականության իրավունքով պատկանող պարիսպի երկայնքով ծառապատում՝ հարակից կառույցներից ընկերության տեսանելիության նվազեցման նպատակով:

Վերը նշվածները կյանքի կոչելը իրականացվելու է փուլային սկզբունքով (1-3 կետերում նշվածները նախատեսվում է իրականացնել մինչև 2020թ-ի դեկտեմբեր ամիս, 4-8 կետերում նշվածները՝ մինչև 2022թ-ի հոկտեմբեր ամիս): Ֆինանսավորումը նախատեսվում է. <<Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>> ՓԲԸ-ում մատուցվող ծառայությունների շրջանակներում ընկերության ֆինանսների ճիշտ և օպտիմալ կառավարման արդյունքում գոյացած եկամտի հաշվին, ներառյալ դեբիտորական պարտքերի հավաքագրմամբ, Հայաստանի հանրապետության ստորջապահության նախարարության, միջազգային կառույցների, բարերարների աջակցությամբ:

<<Գյումրու պաթոլոգոանատոմիական

լաբորատորիա>> ՓԲԸ-ն տնօրենի



Գագիկ Մարկոսյան

02.12.2019թ.